նոքա ալ Աստուծոյ արարածներն են, որ կ'լսէ նոցա աղաղակն ու բողոքը, կը տեսնէ նոցա քաշած նեղութիւնները. Ճշմարտեմք այն խօսքը թէ. "Արդարն ողորմի անասնոյ կեանսն", և չուրանամք այն խրատն ու խոստումը թէ՝ "Երանի ողորմածաց սրտիւք, զի նոքա ժառանգեսցեն զարքայութիւն երկնից".

Թարգ. Ս. Մառուքեանց

Ս. Էջմիածին

## ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ

Յօրագրութեանց Սինոդի

Փետր.— Էջմիածնայ գաւառի Գեօրլու գեղջ ծխական Յովհաննէս քահանայն, իւր սուրբ կոչման հակառակ ընթացից մէջ գտնուած եւ քանիցս խրատ ու յանդիմանութիւն լսելէն վերջը դարձեալ անուղղայ մնալով ի գայթակղութիւն բազմաց, ի վերջոյ խափանու զրկեցաւ Քահանայական կարգէն, եւ հարկաւորութեամբ կարգի հանձնուելոյ աղագաւ Քաղաքական իշխանութեան Տնօրէնութեամբ յանձնուեցաւ:

Մարտ— Արժ. Սուքիաս վարդապետն Պարզեան, որ Տփխիսայ Կոնսիստորիայի անդամ էր, Ախալցխոյ Քաղաքին Յաջորդ նշանակեցաւ ի տեղի Մկրտիչ եպիսկոպոսի Բաբամեանց.

## ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ ՅԵՐԵՒԱՆ

Հետեւեալը՝ որ Երեւանայ մեր Թղթակից Արարատայ անցեալ համար ամսագրոյ մէջ հրատարակել խնդրած էր. որդէն մեր թերթի մամուլ յանձնուած գտնուելուն առթիւ, պարտաւորուեցանք ներկայ ամսագրով հաղորդել մեր ընթերցողաց.

"Անցեալ փետր. ամսոյ 16, 25 և 28ներն Երևանայ քաղաքիս Հայոց ջերմեռանդ խումբը՝ հոգացողութեամբ և վերատեսչութեամբ պ. Յովհաննէս Աբրահամեան Առաքելեանց Տփխիսեցւոյ, յօգուտ երկսեռ դպրոցաց քաղաքիս՝ երկու անգամ "Ռուշանիկ" ողբերգութիւնը (եւ կրկին ըստ խնդրանաց և փափաքանաց ժողովրդեան ներկայանալու պատուոյն և համակրութեան արժանացաւ), և մի անգամ "Երուանդ Բ-ըն" Հայոց Թեմական դպրոցի դահլիճի մէջ պատրաստուած Թատրոնական բեմի վերայ՝ առաւել քան զնախորդ՝ յաջող և սրտաշարժ ներկայացուց. Որ նաև պիտի շարունակէ զկնի ս. Զատկին վերջիշեալ նպատակաւ*.

Միշտ ալ ներկայացմանց մէջ առաւել աշխոյժ և ըստ արժանւոյն ներկայացուցին իւրեանց դերերը պ. պ. Միքայէլ վարժապետ Փիլիպոսեանց, Նահապետ Տէր-Յովհաննէսեանց և Նահապետ Աթանասեանց, նոյնպէս և համեստափայլ օրիորդ Եղիսաբէթ Պ. Օրղանեանց, որ առաջինը եղած է Երևանայ Հայ տիկնայց և օրիորդաց մէջ Թատրոնական բեմի վրայ հանդիսացող, ներկայացնելով "Ռուշանիկի" դերը.

Ասոնք համայն հանդիսականաց հետ

*) Առ այժմ այս երկու անգամի ներկայացմունքը որ գումարեց 600 մանէթի չափ, գրեթէ Թատրոնական տեսարանի և այն պատրաստից բոլոր ծախքերը վճարեց, զոր արած էր առանց տոկոսաց երեւանցի պ. Մկրտիչ Յովհաննիսեանց. Իսկ յետ այսորիկ ներկայացմանց արդիւնքները պիտի մնան բոլորովին յօգուտ երկսեռ դպրոցաց Հայոց քաղաքիս.

Ն. [illegible]

մեծաւ ուրախութեամբ կը յայտնեմք մեր շնորհակալութիւնը որպէս քաղաքիս ջերմեռանդ Հայ խմբին և պ. Աբամելիքեանցին, նոյնպէս և ամենայն ազգասէր դերասանաց և դերասանուհւոյն։

Իսկ ես մեծայոյս և ուրախ եմ՝ թէ Նորեան քաղաքիս համայն հայերը այս միջոցաւ ևս ոչ միայն պիտի ծանօթանան Ազգային անցից, այլ և նիւթականապէս օժանդակ պիտի լինին ըստ ազգասիրական զգացմանց՝ Հայոց երկսեռ դպրոցաց ազատաքայլ զարգացման և յառաջադիմութեան, բարի օրինակ հանդիսանալով մեր Ազգայնոց"։

---

Կարս. — Ինչպէս որ արդէն Պօլսոյ Ազգային լրագրոց միջոցաւ տեղեկացած եմք. նոյնպէս Կարուց մեր թղթակիցը կը հաղորդէ մեզ, թէ՝ Տաճկաստանի մէջ պապական Հայ կղերը մեծ ճիգով և վերջին շնչով կը ջանի Հայաստանեայց ս. Եկեղեցւոյ առ պաշտօնեայս՝ Արքեպիսկոպոսունս՝ Եպիսկոպոսունս և Վարդապետս ևս առ իշխանազուն աշխարհականս անգամ ս. Պապին հրաւիրագրին օրինակները առանձին առանձին գրութեանց մէջ ներփակեալ յղելով՝ գրաւել զնոսա. որպէս զի ներկայ տարւոյ դեկտեմբերին մէջ 'ի Հռովմ գումարուելիք ժողովքին երթալու բարեհաճին։

Այսպիսի մի գրութիւն հանդերձ օրինակաւ հրաւիրագրի Պապին. նաև առ շնորհափայլ Գրիգորիս վարդապետ՝ Կարուց վիճակին բարեգէտ Առաջնորդին ուղղուած լինելով 'ի կողմանէ Ադվուփինոյ գերապայծառ եպիսկոպոսին. և Նորին Արժանապատուութիւնը զարժանին պատասխանը չզլացած լինելով, օրինակները մեզ խրկած է մեր թղթակիցը՝ զորս կը հրատարակեմք։

Այս առթիւ աւելորդ է ասել, որ պապական կղերաց այսպիսի զուր ջանից և տքնութեանց արդիւնքը՝ ուրիշ ոչինչ անհնար է ծնանիլ, բայց եթէ՝ մի և նոյն Հայրենեաց որդւոց՝ արենակից եղբարց, Հայ Ազգի մէջ հերձեալ և անջատեալ մասանց առիթքը փոխանակ բնաջինջ բառնալոյ և կրկին ազգային ոգւով 'ի մի սիրտ և 'ի մի սէր միացնելոյ, ընդ հակառակն՝ աճեցնել ևս ողբալի գժտութեանց և անմիաբանութեան ասպարէզ բանալ։ Օ՜ որ չեմք կարող առանց մեծ և խորին ցաւ ու կսկիծ զգալու 'ի սիրտ և 'ի հոգի՝ նկատել այսպիսի զուր և ընդունայն աշխատութիւնքը։

Վասն զի մեք կ'ըղձանամք և ակնդետ կ'սպասեմք, որ մեր սիրելի ազգայինքը՝ պապական հայ կղերը և հայրենասէր ժողովուրդը՝ մոռանալով ինչ որ ցարդ ժամանակի դառն բերմունքներէ պատահած ու անցած են, և գիտնալով որ անհետացած են այնպիսի պարերն ևս, և ազգային ոգւով զգալով զհասր՝ զգուշանան ինքեանց, որ օտարութեան փարախը ընթանալով, ա՜հ կը հեռանան Հայաստանեայց Առաքելական ս. Եկե-